ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի
աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի /3.2-3/ թափուր պաշտոնը զբաղեցնելու
համար:

Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները:

Պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ համայնքապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար:

Ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

-Առնվազն միջնակարգ կրթություն:

- ՀՀ Սահմանադրության ,<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>,

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքների,

Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ

իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

-Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

-Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2018 թվականի օգոստոսի 14–ին, ժամը 1200 -ին Գայի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ

փաստաթղթերը.

-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս:

-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների

տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի,

վկայականի, աշխատանքային գրքույկի / բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից /

պատճենները բնօրինակների հետ միասին:

-արական սեռի անձիք զինվորական գրքույկի, կամ դրան փոխարինող վկայականի պատճենը՝ իսկականի հետ

միասին կամ համապատասխան տեղեկանք:

-մեկ լուսանկար 3X4 չափի:

-անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր / բացի շաբաթ և կիրակի օրերից /ժամը 1000 -ից մինչև 1600:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է '30' հուլիսի 2018թվական:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ, Գայի համայնքապետարան՝ Խաչատրյան 1, հեռ. 0231 6-01-36 և Արմավիրի մարզպետարան ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն հասցեն՝ ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. 0231 2-76-49 կամ 0231 2-07-70:

Գայ համայնքի ղեկավար՝ Ս.Մարկոսյան